Գերմանիայի հայ համայնքը և նրա առջև ծառացած հիմնական խնդիրներն արդի փուլում

Թովմասյան Մարտին Գ.
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ (Երևան, ՀՀ)
tovmasyan.martin@gmail.com

ՀՏԴ 93/94 (430)`06
Հանգուցաբառեր՝ գերմանահայ համայնք, գերմանահայոց խորհուրդ, հայ-գերմանական կապեր, Հայոց ցեղասպանություն, ներգաղթյալներ, հայ ուսանողներ, կրթական ծրագրեր.

Армянская община Германии и ее основные проблемы на современном этапе

Товмасян Мартин Г.
асистент кафедры международных отношений и дипломатии факультета международных отношений Ереванского государственного университета (Ереван, РА)
tovmasyan.martin@gmail.com

Аннотация. Основная цель исследования – представить проблемы армянской общины Германии. Армянская община Германии небольшая, но достаточно активная и эффективная, обеспечивающая стабильность общины. В статье говорится об истории формирования общины и ее деятельности в разных сферах в современный период. В Германии насчитывается около 40 армянских неправительственных, образовательных, культурных, медицинских организаций, которые в основном возглавляются Германо-Армянским Центральным Советом и Германо-Армянским Прелатством.
Одной из основных задач исследования является представление деятельности армянской общины в направлении признания и осуждения Геноцида армян правительством и парламентом Германии. Благодаря своей организации армянская община в вопросах Геноцида армян на равных конкурирует с могущественной турецкой общиной.
При проведении исследования использовались методы исторической аргументации, событийно-содержательного анализа. При изучении работы структур армянской общины мы также в некоторой степени использовали метод критического анализа.
Главный вывод нашего исследования заключается в том, что армянская община Германии, хотя и относительно немногочисленная, играет значительную роль в немецкой общественно-политической жизни.
Ключевые слова: Германо-армянская община, Германо-армянский совет, армяно-германские отношения, Геноцид армян, иммигранты, армянские студенты, образовательные программы.

The Armenian Community of Germany and it's Main Issues at Current Period

Tovmasyan Martin G.
Yerevan State University, Faculty of International Relations, Chair of International Relations and Diplomacy (Yerevan, RA)
tovmasyan.martin@gmail.com

Abstract. The main purpose of the study is to present the problems of the Armenian community in Germany. The Armenian community in Germany is small, but it is quite active and effective, ensuring the stability of the community. The article refers to the history of the formation of the community and its activities in different spheres in the modern period. There are about 40 Armenian non-governmental, educational, cultural, healthcare organizations in Germany, which are mainly headed by the German-Armenian Central Council and the German-Armenian Prelacy.
One of the main tasks of the study is to present the activities of the Armenian community in the direction of the recognition and condemnation of the Armenian Genocide by the German government and parliament. Due to its organization, the Armenian community in the Armenian Genocide issues competes with the powerful Turkish community as an equal.
In conducting the research, we used the methods of historical argumentation, event-content analysis. In studying the work of the structures of the Armenian community, we have also used the method of critical analysis to some extent.
The main conclusion of our study is that the Armenian community in Germany, although relatively small in number, plays a significant role in German socio-political life.
Keywords: German-Armenian community, German-Armenian Council, Armenian-German relations, Armenian Genocide, immigrants, Armenian students, educational programs.

Պատմական ակնարկ

Ինչպես աշխարհի բազմաթիվ երկրներում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ևս գոյություն ունի հայկական համայնք: Գերմանահայ համայնքի ձևավորման սկիզբն է համարվում 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը, երբ հայ մտավորականների և վաճառականների փոքր խմբեր ժամանում էին Բեռլին, Լայպցիգ, Դրեզդեն, Համբուրգ և հաստատվում այդ քաղաքներում:

19-րդ դարում Գերմանիայում հաստատված հայերից առաջինների շարքում էին Արևելյան Հայաստանից եկած հայ ուսանողները, մյուս խումբն Աբդուլ Համիդի 1895-1896 թթ. իրականացրած կոտորածների հետևանքով որբացած երեխաներն էին, որոնք գերմանացի միսիոներների աջակցությամբ տեղափոխվեցին Գերմանիա: Արդեն 20-րդ դարում այդ երկիր հասան 1915 թ. ցեղասպանությունից մազապուրծ հայեր, որոնց թիվը մեծ չէր: Իսկ ահա հետագայում առաջին և երկրորդ սերնդի հայերի թիվը զգալիորեն աճեց Գերմանիայում [**2**]:

Հայ վերաբնակների առաջին զանգվածային ալիքը դեպի Գերմանիա սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1940-ական թթ. վերջերին, հիմնականում Մերձավոր Արևելքի տարբեր երկրներից: 1950-1960-ական թթ. հայ վերաբնակների հիմնական զանգվածն Իրանից, Թուրքիայից և Լիբանանից Գերմանիա ուսանելու եկած հայ երիտասարդությունն էր, որն այստեղ մշտական բնակություն հաստատեց: Հենց այս ներգաղթյալներն էլ երկար ժամանակ կազմեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հայկական սփյուռքի կորիզը [**5**, էջ 111]: Մինչև 1960-ական թթ. հայերի թիվը Գերմանիայում շուրջ 2000-3000 էր [**4**, թ. 49]:

Հայերի զանգվածային տեղաշարժ տեղի ունեցավ նաև 1970-ականներին, որը պայմանավորված էր Իրանում հեղափոխությամբ և լիբանանյան պատերազմով, իսկ արդեն 1980-ականներին իրան-իրաքյան պատերազմի հետևանքով շարունակվեց իրանահայերի հոսքը դեպի Գերմանիա: 1990-ականներին տեղի ունեցավ հայերի զանգվածային արտագաղթ Գերմանիա՝ պայմանավորված Խորհրդային Միության փլուզման հետևանքով Բաքվում, Սումգայիթում և Լեռնային Ղարաբաղում հայերի դեմ ծավալված հարձակումներով [**5**, էջ 112]:

Գերմանիայում որպես հայկական առաջին կազմակերպություն հիշատակվում է «Հայ ուսանողական-ակադեմիական ճեմարանական ընկերությունը», որը հիմնադրվել է 1860 թ. (մեկ այլ աղբյուրի հիշատակմամբ 1885 թ.) Լայպցիգի համալսարանում, այնուհետև տեղափոխվել Բեռլին, իսկ այժմ կազմակերպության վարչությունը գտնվում է Բոխում քաղաքում [**4**, թ. 49]:

Քանի որ Գերմանիան դաշնային հանրապետություն է, և հայերը սփռված են 16 երկրամասերով մեկ, այդ իսկ պատճառով նրանց ընդհանուր թիվը ներկայումս մոտավոր է նշվում՝ 50.000-60.000 մարդ [**2**]: Հայերը հիմնականում կենտրոնացած են տնտեսապես ավելի ուժեղ և խիտ բնակեցված դաշնային հողերում. Հռենոս-Վեստֆալիա՝ 19.2 տոկոս, Հեսսեն՝ 12.1 տոկոս, Բավարիա՝ 10,6 տոկոս, Բադեն-Վյուրթենբերգ՝ 4.4 տոկոս և Բեռլին՝ 5.6 տոկոս [**6**] : Բավական հզոր են Բեռլինի (մոտ 2000 մարդ) և Մյունխենի հայ համայնքները [**8**, էջ 4]: Դրանք նաև ներգաղթյալներին բավական բնորոշ բնակավայրեր են:

Թեև այստեղ հայերը սակավաթիվ են, սակայն հայ համայնքը հետզհետե ավելի է կազմակերպվում և հասարակական-քաղաքական կյանքում օրեցօր ակտիվանում է նրա դերը, ինչը պայմանավորված է հայերի նկատմամբ դաշնային իշխանությունների բարյացակամ վերաբերմունքով [**8**, էջ 111]: Գերմանահայ համայնքի դերն ավելի են ընդգծում հանրապետությունում գործող հայկական կազմակերպություններն ու տարբեր հողերում ստեղծված հայ համայնքները:

Գերմանիայի հայկական կազմակերպությունները

Այդ երկրում գործող հայկական կազմակերպությունները հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի՝ եկեղեցական համայնքներ և, այսպես կոչված, աշխարհիկ թև [**4**, թ. 49]: Դաշնային Հանրապետությունում գործում են շուրջ 40 հասարակական, մշակութային և այլ կազմակերպություններ, որոնց մեծ մասը ղեկավարվում է Գերմանահայոց կենտրոնական խորհրդի և Գերմանահայոց առաջնորդարանի կողմից: Գերմանահայոց կենտրոնական խորհրդի կազմում ընդգրկված են 16 հայկական միություններ և բազմաթիվ անհատներ, Գերմանահայոց առաջնորդարանի կազմում՝ 14 համայնքային կառույցներ և անհատներ [**3**]: Գերմանիայում գործում է Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմը, որի առաջնորդարանը գտնվում է Քյոլնում և հիմնադրվել է 1991 թ. ապրիլի 15-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հատուկ կոնդակով, երբ թեմի առաջնորդ նշանակվեց Տեր Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանը [**9**, էջ 61]:

Բացի Հայ առաքելական եկեղեցուց, Գերմանիայում գործում է նաև հայ բողոքականների փոքրաթիվ համայնքը, որի առաջնորդն է Հակոբ Ջամբազյանը՝ նստավայրը՝ Վեցլար, որը բարեգործական լայն աշխատանքներ է ծավալել Հայաստանում և Արցախում [**4**, թ. 45] :

Գերմանիայում գործող հայկական կազմակերպություններից հիմնականում կարող ենք նշել քաղաքական կուսակցությունները, կրթական, մշակութային, մարզական, բարեգործական կազմակերպություններն ու հաստատությունները:

Հատուկ կարևորությամբ պետք է նշել Գերմանահայոց կենտրոնական խորհրդի (ZAD) դերը: Այն մշակութային, մարզական և բարեգործական մի շարք կազմակերպությունների հովանավոր է (այստեղից էլ առաջացել է խորհրդի նախկին անվանումը՝ Dachverband (տանիքային միություն)): Խորհուրդը կուսակցականացված չէ, բայց իր կազմում կան առանձին կուսակցություններ: Ի տարբերություն Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի՝ խորհուրդը ֆինանսական տեսանկյունից հզոր չէ, սակայն հնարավորությունների առավելագույնն է ներդնում հայապահպանման և հայերի համախմբման գործում: Գերմանահայոց խորհրդի և Գերմանահայոց առաջնորդարանի միջև երբեմն որոշ տարաձայնություններ են լինում, որն իր ազդեցությունն է թողնում դեսպանություն - հայ համայնք փոխհարաբերությունների վրա, սակայն անհրաժեշտության դեպքում կողմերի միջնորդությամբ դեսպանությունն իր վրա է վերցնում հաշտարարի պարտականությունները [**4**, թ. 51]:

Հայ-գերմանական հարաբերությունների մասին խոսելիս անգնահատելի է Հայ-գերմանական ընկերակցության (ՀԳԸ-DAG) դերը: Այն ստեղծվել է 1914 թ. հայերի բարեկամ Յոհաննես Լեփսիուսի, հրապարակախոս Պաուլ Ռոհրբախի, հայագիտության պրոֆեսոր Յոզեֆ Մարկվարտի և այլոց կողմից: Հայ-գերմանական ընկերակցության զարգացման գործում մեծ վաստակ ունի նրա ներկայիս ղեկավար Ռաֆֆի Քանդյանը (Հանովեր): ՀԳԸ-ի բազում միջոցառումների շնորհիվ Հայաստանն ավելի ճանաչելի է դառնում Գերմանիայում: Հատուկ նշանակություն ունի նրա կողմից հրատարակվող "Deutsch-armenische Korrespondenz"-ը (Գերմանա-հայկական թղթակցություն), որը լույս է տեսնում 4 ամիսը մեկ, որը գերմանացի, հայ և արտասահմանցի հեղինակների համար հինալի հարթակ է քաղաքական, գիտական ու մշակութային հրապարակումների համար [**9**, էջ 61]:

«Հայ ակադեմիական միություն 1860»-ը ("Der Armenisch-Akademische verein 1860") ստեղծվել է Լայպցիգում, ամենահին և կուռ կազմակերպություններից է հայ համայնքում: 2001 թ. հունվարին միությունը վերածնվեց Բոխումում: Նրա գործունեության հիմնական ուղղություններից են Գերմանիայի տարբեր քաղաքներում և համայնքներում մշակութային տարբեր միջոցառումներ, հայկական մշակույթի օրեր, դասախոսություններ, գրքերի շնորհանդեսներ և մեկօրյա հայկական դպրոցներ կազմակերպելը [**9**, էջ 53]: Միության գործունեության վերածննդի մեջ մեծ է դրա նախագահ Ազատ Օրդուխանյանի դերը, ով իր ակտիվ գործունեությամբ մի յուրատեսակ կամուրջ է ստեղծել Գերմանիայի և Հայաստանի միջև:

Գերմանիայում գործող հայկական կազմակերպություններից, որոնք առավել աչքի են ընկել իրենց ակտիվությամբ, կցանկանայինք առանձնացնել՝ Բեռլինի հայ համայնքը (2000 թ. Բեռլինի հայկական համայնքը բաժանվեց 2 մասի՝ մեկը Գերմանահայոց կենտրոնական խորհրդի, մյուսը՝ Գերմանահայոց առաջնորդարանի հետ կապ պահպանելով), Հեսսենի հայ մշակութային միությունը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի տեղական հանձնախումբը, Գերմանահայ բժիշկների և բուժաշխատողների միությունը, Գերմանահայ գործարարների միությունը, Գերմանիայի ՀՕՄ-ի մասնաճյուղը, Բոննի «Աբովյան» միությունը, Քյոլնում գտնվող «Սիլվա Կապուտիկյան» կանանց միությունը, Շտուտգարտի «Մարալ» մշակութային միությունը, Համբուրգի Հայ մշակութային միությունը, Բրաունշվայգի «Հռենոս-Արաքս գերմանա-հայկական» բարեսիրական միությունը, Դյուսբուրգի Հայ մշակութային միությունը, Մյունխենի «Սիամանթո» արվեստագետների միությունը [**4**, թ. 51], ինչպես նաև Հանովերի համալսարանի հայ ուսանողների միությունը, «HAIK» գերմանա-հայկական ուսանողական ակումբը [**6**]:

Բացի վերը նշված կազմակերպություններից, Գերմանիայում գործում են գիտական և գիտահետազոտական նաև մի շարք կենտրոններ, որոնցից է Մյունխենի Հայկական հարցերի ինստիտուտը, որը հիմնադրվել է Եդուարդ Օգանիսյանի կողմից՝ Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցության նվիրատվությունների շնորհիվ: 1977 թ. ապրիլի 22-ին բավարական դաշնային իշխանությունները միությունը ճանաչեցին որպես գիտական ինստիտուտ: Մինչև 2004 թ. ինստիտուտը ղեկավարել է Օգանիսյանը, իսկ վերջինիս մահից հետո՝ Ալիս Մարուխյանը [**7**, էջ 132]: Գիտահետազոտական կենտրոններից է նաև Ահենի հայկական ճարտարապետության հետազոտական կենտրոնը, որը ղեկավարում է Արմեն Հախնազարյանը [**4**, թ. 53]:

Կարևոր է գերմանահայ համայնքի դերը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն առաջ մղելու գործում: Այդ նպատակով ստեղծվել են մի շարք ընկերություններ ու հաստատություններ: Այսպես, Բոխումի Ռուր համալսարանին կից գործում է Սփյուռքի և ցեղասպանության հարցերի հետազոտական ինստիտուտը, որը ղեկավարում է Միհրան Դաբաղը, իսկ պատվավոր տնօրենն էր Ցոլակ

Տեր-Հարությունյանը: Հալլե/Վիթթենբերգի Մարտին Լյութեր համալսարանի Լոյկորեյա հիմնադրամին կից «Մեսրոպ» հայագիտական կենտրոնը ղեկավարում էր պրոֆեսոր Հերման Գոլցը, իսկ տնօրենն էր Արմենուհի Դրոստ-Աբգարյանը: Բեռլինում գործում է Հայկական տեղեկատվական և փաստագրական կենտրոնը, որը ղեկավարում են Թեսա Հոֆմանը և Ժիրայր Քոչարյանը: Գերմանիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործում մեծ ակտիվություն է ցուցաբերում «Հայաստան փաստագրական կենտրոնի» ղեկավար Թեսա Հոֆմանը:

Հայոց ցեղասպանության հարցը գերմանահայ համայնքում

Գերմանիայում Հայոց ցեղասպանության ճանաչման առաջին կազմակերպված փորձը ձեռնարկվեց 2000 թ. ապրիլի 13-ին: Գերմանիայի Բունդեսթագի խնդրագրերի հանձնաժողով ներկայացվեց «Ժամանակն է դատապարտելու ցեղասպանությունը» [**11**] վերնագրով խնդրագիրը: Այս ձեռնարկի հեղինակներն էին Գերմանիայում գործող չորս կազմակերպություններ՝ Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, Տեղեկատվական և փաստագրական կենտրոնը, Հայկական հարցերի ինստիտուտը և Վտանգված ազգերի միության՝ Հայոց ցեղասպանության հարցերով հանձնախումբը: Բացի սույն կազմակերպություններից՝ խնդրագրին կցվել էր Ֆրանկֆուրտում գործող թուրքական «Ցեղասպանության հակառակորդների միության» կողմից անցկացված ստորագրահավաքը: «Ժամանակն է դատապարտելու ցեղասպանությունը» խնդրագրի տակ ստորագրեցին Գերմանիայի 16.000 քաղաքացիներ [**10**]: Դրա երկու հիմնական պահանջներն էին՝ ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը, ինչպես նաև ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա՝ ճանաչելու ցեղասպանության պատմական իրողությունը:

Հետագա տարիներին ևս հայ համայնքը սերտորեն համագործակցեց Բունդեսթագի մի շարք խմբակցությունների հետ, որպեսզի համատեղ ջանքերով կարողանա ազդել կառավարության դիրքորոշման վրա՝ տուրք չտալու թուրքական գործոնին և ճանաչելու ու դատապարտելու պատմական իրողությունը: Այս ջանքերի արդյունքում 2016 թվականի հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագի պատգամավորները ձայների ճնշող մեծամասնությամբ, մեկ դեմ և մեկ կողմ քվեով ընդունեցին բանաձև, որով 1915 թվականին Օսմանյան կայսրության կողմից իրականացված հայերի զանգվածային կոտորածները ճանաչվեցին ցեղասպանություն:

Ինչ վերաբերում է կրթական գործի կազմակերպմանը, Գերմանիայում թեև չկան հայկական դպրոցներ, սակայն դրանց փոխարինում են եկեղեցական համայնքների և հայկական տարբեր կառույցների կողմից կազմակերպվող կիրակնօրյա դասընթացները: Երիտասարդության համախմբման գործում ակտիվ դերակատարություն ունի Հայ երիտասարդության խորհուրդը [**10**]:

Գերմանիայում երիտասարդների համախմբմանը ևս խանգարում է այն հանգամանքը, որ երկրի տարածքում հայերը, այդ թվում նաև ուսանողները համաչափ տեղաբախշված չեն, որի պատճառով դժվար է ոչ միայն նրանց համախմբելը, այլև առհասարակ ճշգրիտ վիճակագրություն ունենալ Գերմանիայում ապրող հայերի և հայ ուսանողների թվի վերաբերյալ: Նախնական տվյալներով, Գերմանիայի 200-ից ավելի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են տարբեր երկրներից շուրջ 750-800 հայ ուսանող և ասպիրանտ: Չկազմակերպված լինելու պատճառներից է ինչպես գերմանական համալսարանների՝ աշխարհագրական տեսանկյունից կենտրոնացված չլինելը, այնպես էլ այն, որ, ի տարբերություն նախկին ԽՍՀՄ երկրներից Գերմանիայում հաստատված հայ երիտասարդների, այլ երկրներից այստեղ հաստատված հայերը, մանկապատանեկան տարիքից համայնքային կառույցներին սերտորեն ինտեգրված են [**1**, էջ 261]:

Գերմանիայում լույս տեսնող պարբերականներից են «Հայ-գերմանական թղթակցություն» ամսագիրը, «Գարուն» ամսագիրը, որը հրատարակվում է Բրուխզալում, իսկ հրատարակության համար անհրաժեշտ գումարները գոյանում են բաժանորդագրությունից: Քյոլնի հայ համայնքի ֆինանսավորմամբ հրատարակվում է նաև «Բարև» ամսագիրը [**4**, թ. 53] :

Եզրակացություն

Այսպիսով, Գերմանիայում հայ համայնքի ջանքերով ստեղծվել է մի ամուր ու կայուն կազմակերպչական կառույց, որը համարձակ քայլերով վերելք է ապրում: Ճիշտ է՝ հայ համայնքն այնքան էլ մեծ չէ, սակայն համահայկական նշանակության հարցերում այն բավականին ծանրակշիռ դեր ու ազդեցություն ունի. օրինակ՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցերում թուրքական հզոր համայնքի հետ մրցակցության առումով երկու կողմերի ուժերը, կարելի է ասել, գրեթե հավասար են:

Ամփոփելով թեման՝ պետք է փաստել, որ Գերմանիայի հայ համայնքը բավականին ակտիվ և արդյունավետ գործունեություն է ծավալում՝ ապահովելով համայնքի կայունությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ավագյան, Քնարիկ**. *Ուսանողության և երիտասարդ մտավորականության դերն արդի Գերմանիայի արդի հայ համայնքի ձևավորման գործում*: // «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, հ. 7, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակություն. Երևան, 2006:
2. «ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության պաշտոնական կայքը», http://germany.mfa.am/hy/community-overview/. (դիտվել է 08.06.2017):
3. «Գերմանիայի հայ համայնք», 25.11.2013, http://old.hayernayser.am/archives/24045. (դիտվել է 08.06.2017):
4. ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական բաժնի նյութեր, ց. 13, գ. 14:
5. **Սումլյոննի, Սերգեյ**. *Գերմանիայի հայ սփյուռքը* // «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (13). Երևան, 2006:
6. **Dreusse, Mareike**. *Die armenische Diaspora in Deutschland, Ihr Beitrag zur Entwicklung Armeniens*. Frankfurt a. M., 2008.
7. **Fleck, Andre**. *Machtfaktor Diaspora?: Armenische Interessenvertretung in Deutschland*, Politik, Gemeinschaft und Gesellschaft in einer globalisierten Welt / Politics, Community and Society in a Globalized World, S.132, LIT Verlag. Münster, 2014.
8. **Hofmann, Tessa**. *Armenier und Berlin - Berlin und Armenien*. Berlin, 2005.
9. **Ordukhanyan, Azat**, *Armenier in deutschland, Geschichte und Gegenwart, Vortrag am 19, April 2008 in Erfurt*. Der Ausländerbeauftragte beim Thüringer Ministerium für Soziales, Familie und Gesundheit. Erfurt, 2009.
10. "Petition, Es ist Zeit: Völkermord verurteilen", http://www.avantart.com/armenia/petition.html. (Accessed: 08.06.2017).
11. "Petitionsantrag April 2000, Es ist Zeit: Völkermord verurteilen", http://www.deutscharmenischegesellschaft.de/materialien/der-genozid-an-den-armeniern/vor-dem-deutschen-bundestag2/petitionsantrag-april-2000/. (Accessed: 08.06.2017).

Сдана/Հանձնվել է՝ 04.02.2022
Рецензирована/Գրախոսվել է՝ 18.02.2022
Принята/Ընդունվել է՝ 25.02.2022